

... ԵՒ ՆՈՅՆՉԱՓ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՄՐՏԱԲՈՒԽ ՄԱՂԹԱՆՔ

ՆՈՅՆ ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ՑՈԲԵԼԵԱՐԻՆ

ՍԻՐՆԻ ՆՈՒԻՐԱԿԱՆ ԲԱՄԲՈՒՆՔԵՆ

Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ԱՐԱ.Բ. ԱԹՈՐՈՅ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԷՆ

Նորին Սուլը Օծութիւն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սկրագեղ ողջ ջոյներովը եւ բարձր գնահատաներովը կը նուիրագործենք համազգային Մեծանուն Յորելեար, Մեծի Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոս Գարեգին Ա.ին նուիրուած «Սիոն»ի այս թիւը, կրկնելով նոյն սրբազն աղքիւրէն բխած աղօթանուէր մաղթանք-ներն ու բաղծաներոց:

Ոչ ոք պիտի կրնար աւելի հարազատորէն ներկայացնել եւ աւելի արժանաւրապէս գնահատել Մեծանուն Յորելեարի բազմարդին կեանքը բան ։ Ս. Օծութիւնը որ ականատես վկան եղած է անոր աստիճանական վերելքներուն վաթուուն տարիներ շարունակ:

Ազգը համօրէն անվերապահ զգացումներով կ'ընդունի այդ սրբազն վկայութիւնն ու գնահատանքը եւ իր ամենազերմ երախտագիտութիւնն ու յարգանքը կը նըւիրէ Մեծանուն Յորելեարին:

Նորին Սուլը Օծութիւնը իր շքեղ գնահատականով ուժուունամեայ Յորելեարի ալեզարդ ճակտին վրայ կը զնէ փառապսակ մը որ Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Ազգին արդար պարծանքներէն մին պիտի մնայ բոյոր ժամանակներու մէջ: Արդար պարծանք, վասնզի այդ պասակին ամէն մէկ ոսկեթելը, ամէն մէկ գոհարը առնուած է ուղղակի Յորելեարի կեանքէն՝ կեանքը մը որ իր նորին մէջ հարազատ ծնունդն է Հայ վանականի այն տիպարին որ գոյութիւն առաւ ու զարգացաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ ։ Եւ ե. դարերուն եւ կրցաւ անմար պահն Սուլը կուսաւորի լոյսն ու հուրը տասանեւինքն գոթորկալից դարերու ընթացքին:

Նորին Սուլը Օծութիւնը Յորելեարի արժանիքները երեւան բերելու իր մանրազենին աշխատանքն մէջ երեւան բերած է նաեւ այդ տիպարը եւ մենք առնելով Յորելեարի արժանեան շարքը Երենց բնական կարգով կ'ունենանք անոր ամբողջական պատկերը: Առողջ մտքով, լայն սրտով անձնաւորութիւնն, ինչ որ կը կազմէ առողջ նկարագիրը մարդուն մէջ: Հաւատաւոր, ուղիղ, անծոնւէր, աշխատասէր, հայրենասէր եւ կորովի, հայ ժողովուրդին անխոնզ մշակն ու բազ Հովիւը, արթուն Առաջնորդը որուն մէջ Եկեղեցափրութիւնն ու ազգասիրութիւնը, աստուածածիրութեան ու մարդափրութեան պէս անդատանելիքրէն միամսնական են: Անոր մէկ ծեռքին մէջ խաչ կայ եւ միւս ծեռքին մէջ զրիք: Աւետարանի հրաշունչ քարոզին է ան, Տիրոց ճշմարիտ Առաքեալը: Անոր պատգամները յաւիտենական ճշմարտութեան վրայ հիմնուած են եւ նետեւարար միշտ կը ներշնչեն, կ'ոգեւորեն, կը խանդապաեն ունկնդիրները: Անոր գրի վաստակը անկորնչելի արժէքներ կը բովանդակէ եւ լայնորէն կը նպաստէ ազգի հոգեւոր մտաւոր եւ բարոյական զարգացման: Փառաւորելով Յորելեարը կը փառաւորուի սրբացած այդ տիպարը եւ Յորելինական Հանդիսութիւնները կը զգնուուն տօնակատարութեան հոգեւոր իմաստն ու գեղեցկութիւնը:

Այս մտածումներուն հնա բոլորովին համաձայն է Յորելեարի հոգին կրոր կը պայտարաք թէ իր Յորելինական Հանգիստութեանց միակ նպատակը պիտի ըլլայ ապահովութիւններու հովանոցը, ուրիշ խօսքով հաստատուն հիմերու վրայ գնել այն նոցը ուր պիտի պատրաստուին իր կենդանի պահած ոսկեղարեան տիպարի հովանութիւններ: Անահման է իր եռանդն ու խանող հարազատ նմանութիւնը կրող հոգեւորականներ:

այդ նուիրական նպատակին առջեւ եւ անոր սիրոյն ոչ մէկ զոհողութիւն խնայել կուզէ: Պիտի ընէ նոյնիսկ այն ինչ որ իր վայրը բրած է իրեն համար, պիտի փրցնէ իր ճակտին դրուած պասկներուն բոլոր արժէքները եւ պիտի գոհարերէ այդ գործին:

Նրանիկ է Մրբոց Յակոբանց Առաքելական Աթոռը իր Ուխտանուէք Միարանութեամբ եւ իր թեմի բոլոր զաւակներով, որ առիթը պիտի ունենայ Յոթելինական Հանդիսութիւններով մեծարելու նորին Մրբութիւնը:

Մեր այս երջանկութիւնը ստահ ենք իր մեծագոյն մխիթարութիւններէն մին պիտի դառնայ վասնզի Հայրենիքէն գուրս ուրիշ ոչ մէկ տեղ այնքան մօտիկ կը գտնուի իր նոգիին եւ իր սրտին որքան Սուրբ Երուսաղէմը եւ Հայ Երուսաղէմը իրենց կրօնական ներշնչուններով, իրենց ազգային եկեղեցական յիշատակներով եւ արժէքներով:

Նորին Մրբութեան սրտի այս մերձաւորութիւնը խորապէս զգացուած ու յարգուած է միշտ երուսաղէմի մէջ եւ ընական է որ իր կաթողիկոսութեան օրով Կիլիկիոյ և երուսաղէմի Աթոռներու զարաւոր բարեկամական յարաբերութիւնները պիտի ըլլան աւելի քան երեք սերտ եւ համերաշխ, իրենց նուիրապետական ուրոյն կարգ ու պարբը պահելով հանդերձ: Անոնք այլեւ իրեւ Հայաստանիայց Եկեղեցւոյ եւ Ազգի երկու դրացի նոգեւոր եւ իմացական կեղորններ իրենց հաւատարմութեամբ եւ իսէչալով միահնական, պէտք է գործեն ծեռք ծեռքի Մերձաւոր Արեւելքի հայութեան ազգային յառաջդիմութեան՝ հոգեւոր իւ մտաւոր մարզերուն մէջ:

Անցակալ Մեծ Պատերազմի արհաւերքներէն վերջ, Երուսաղէմի Աթոռի զոհարերութիւնները ի նպաստ Կիլիկիոյ Աթոռուի վերահաստատութեան եւ զօրացման, անգերազանցելի կը մնան ըստ ամենայնի: Թուական եւ այլ պայմաններու համեմատութեամբ, նոյնը կարելի է ըստ Ա. Երկրի մեր թեմներու Կիլիկիան օժանդակութեան համար ի նպաստ Լիբանանի զամազան ազգային հաստատութիւններու:

Երուսաղէմի Սթորո այս ոգեւոր պիտի շարունակէ իր շանքերը վասնզի համոգուած է թէ Կիլիկիոյ Աթոռուն առաքելութիւնը, Մայր Աթոռու հետ ունեցած իր ներկայ կատարով, աւելի քան երեք անհրաժեշտ է՝ Կիլիկիան հայութեան ազագան երաշխատորելու համար:

Այս զգացունմերով եւ համոզումով նորին Սուրբ Օծութիւն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնութեամբ մեր ամենախորին շնորհաւորութիւններն ու յարգանքները կը նուիրենք Հայաստանեայց Եկեղեցւոյ այն Շնորհազարդ Հայրապետին եւ Մեծ Վարդապետին, որ յիսուն տարիներ շարունակ՝ հաւատարմի իր քահանայական կոչումին եւ ուխտին խաչ ի ծեռին իր առաքելական քրիստոսաւանդ պաշտօնները կատարած է՝ հաւատացեալներու նոգններու փրկութեան եւ բարոյականի զարգացման համար: Որ վաթսուն տարիներ, իր հոգեւոր պաշտօններուն հետ առընթել, իր ժամանակի եւ ոյժերուն մեծ մասը զահարերած է հայ բանասիրութեան, հազարաւոր ծեռազիրներ եւ արձանագրութիւններ, Կոթողներ ու քանդակներ ուսումնասիրած եւ Հայ ժողովորդի անցեալ վատառը եւ մշակոյթի պատմութեան թանկազնն նպաստներ բերած:

Օրհնութիւն եւ գոհութիւն կնաց եւ շնորհաց յաւիտենական Աղբիւրին որ իր օծեակ զաւակին պարզեւած է ութսուն պտղաւէտ տարիներ փառաւորելու իր Եկեղեցին:

Կաղոթենք որ Նա իւր կենաւուու պարզեները առատապէս ցոյէ նորին Մրբութեան Երեշտակային անթառաւմ կիանքին վրայ որպէսզի բարեբախտութիւնը ունենայ ի կատար ածեու իր վաստակին եռյակապ շնորք ամբողջութեամբ, եւ ապահովէ իր նորեւոր գլուխոցը եւ աթոռաշէն առաջադրութիւնները:

Կը մաղթենք որ Կիլիկիան Աթոռին զասի բոլոր անդամները որի պահական եւ հաւատարմական ամենաածերը զացացուներով եւ գիտակցութեամբ զօրապիտ ճանդիսանան նորին Մրբութեան իր կեանքի ամենահրաժարակ եւ կննալից այս շրջանին:

Շնորհակալութիւն բոլոր անոնց որոնք իրենց խօսքով, գիշուի եւ նուիրատրւած թիւներով պատուեցին եւ պիտի պատուին Մեծանուն Յոթեամբարը, որուն մասաւցուած ուել պատիւ վատառի Հայութեան, Հայաստանեայց Եկեղեցին, Հայ Գրականութեան, Հայ Մշակոյթին, անոր հոգեւոր, բարոյական եւ իմացական ամբողջ կառաւցուածքին:

Կիւրել Բ. ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ